



**Շվեդիայում կենսաթոշակային բարեփոխումների նախագծման և իրականացման գործընթացը սեւել է շուրջ 9 տարի: Այն սկսվել է 1992թ. և ավարտվել 2000թ.: Կենսաթոշակային բարեփոխումների օրենքների փաթեթն ընդունվել է 1994թ., սակայն ֆաղափական և ճնշեսական գործոններով ղայմանավորված՝ դրանց ուժի մեջ մտնելը հետաձգվել է մինչև 1999թ.: Կենսաթոշակային համակարգը ներկա ճեւոք սկսել է գործել 2000 թվականից:**

# ՇՎԵԴԻԱՅԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բարեփոխումներն իրականացնելիս Շվեդիայում նպատակ են հետապնդել.

- ամրապնդել կենսաթոշակային համակարգի ֆինանսական և քաղաքական կայունությունը,
- ապահովել կենսաթոշակային համակարգի թափանցիկությունը և իրապարակայնությունը՝ յուրաքանչյուրին հնարավորություն տալով տեղյակ լինել իր եկամուտների, ակնկալվող կենսա-

թոշակի, կատարված վճարների մասին,

- հաստատել առավելագույն արդարություն սերունդների միջև,
- ապահովել անհրաժեշտ նվազագույն եկամուտ կենսաթոշակային տարիքում:

Շվեդիայի կենսաթոշակային ներկա համակարգն ունի բազմաստիճան կառուցվածք: Բարեփոխված համակարգը բաղկացած է պետական և

## Կարեն ԹԱՄԱՆՅԱՆ

33 ֆինանսների  
 նախարարության  
 ֆինանսական շուկայի  
 զարգացման  
 վարչության պետ

## Արսեն ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կենսաթոշակային  
 քաղաքականության  
 և իրավական հարցերով  
 փորձագետ



մասնավոր բաղադրիչներից: Պետական կենսաթոշակային բաղադրիչը ներառում է կենսաթոշակային հետեյալ ծրագրերը.

- ✓ երաշխավորված,
- ✓ պայմանակուտակային,
- ✓ պարտադիր լրիվ կուտակային: Իսկ մասնավոր կենսաթոշակային բաղադրիչը ներառում է հետեյալ երկու կենսաթոշակային ծրագրերը.
- ✓ մասնագիտական,
- ✓ կամավոր ապահովագրական:

**Երաշխավորված կենսաթոշակը** հիմնված է Շվեդիայում բնակվելու տեղողության փաստի վրա: Երաշխավորված կենսաթոշակ ստանալու համար անձը, անկախ քաղաքացիությունից, պետք է Շվեդիայում բնակված լինի նվազագույնը 3 տարի, իսկ լրիվ չափով երաշխավորված կենսաթոշակ ստանալու համար՝ 40 տարի, սկսած 16 տարեկանից: Անձի՝ երաշխավորված կենսաթոշակ ստանալու իրավունքը գործում է 65 տարեկան դառնալուց հետո:

### Նախկին բախողական եւ ներկա Պայմանակուտակային կենսաթոշակային համակարգը

Մինչև բարեփոխումները Շվեդիայի կենսաթոշակային համակարգը լրիվ բախողական PAYG համակարգ էր, որը գործում էր «սահմանված նպաստներ (DB)» սկզբունքով: Այն ներդրվել էր 1960թ., որի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար անձը պետք է ունենար 30 տարվա աշխատանքային ստաժ, կենսաթոշակի չափը որոշելիս հաշվի էր առնվում 15 տարվա ընթացքում ստացած առավել բարձր աշխատավարձերի միջին գումարը: Իսկ կենսաթոշակի չափը որոշվում էր վերը նշված միջին աշխատավարձի գումարի 70%-ի չափով: Այսինքն՝ փոխհատուցման գործակիցը սահմանված էր 70%: Ներկայում փոխհատուցման գործակիցը 67% է:

Բարեփոխումներից հետո այն քաղաքացիները, ովքեր ծնվել են 1954թ. եւ դրանից հետո ամբողջությամբ ընդգրկվել են պայմանակուտակային կենսաթոշակային նոր համակարգում: 1938-54թթ. ժամանակահատվածում ծնված քաղաքացիներն իրենց կենսաթոշակի մի մասը կստանան կենսաթոշակային հին համակարգով, իսկ մյուս կեսը՝ պայմանակուտակային նոր համակարգով:

1937թ. եւ դրանից առաջ ծնված քաղաքացիներն իրենց կենսաթոշակը կստանան կենսաթոշակային հին համակարգով: Շվեդ փորձագետների գնահատմամբ՝ կենսաթոշակային նախկին համակարգը եղել է ֆինանսապես անկայուն, եւ դրա գոյության պարագայում 2025թ. կենսաթոշակային համակարգի բյուջեի դեֆիցիտը կկազմեր 35%:

Պայմանակուտակային (NDC-Notional Defined Contribution) համակարգը կենսաթոշակային ներկա համակարգի հիմնաքարն է, որը բախողական (PAYG) համակարգ է եւ նույնպես գործում է «սահմանված վճարներ (DB)» սկզբունքով: Սակայն էապես տարբերվում է նախկին բախողական (PAYG) համակարգից:

Ներկայում պարտադիր սոցիալական վճարների դրույքաչափը 18.5% է, որի 11.5%-ը վճարում է գործատուն, իսկ 7%-ը՝ աշխատողը: Այդ 18.5%-ից 16%-ն ուղղվում է պայմանակուտակային համակարգի ֆինանսավորմանը: 16%-ից ձեւավորված գումարները առաջին հերթին ծախսվում են ներկա կենսաթոշակառուներին կենսաթոշակ վճարելու նպատակով: Սակայն այդ միջոցներն ամբողջությամբ չեն ծախսվում, այլ դրանցից ձեւավորվում են նաեւ պահուստային ֆոնդեր (Buffer funds), այսինքն՝ կենսաթոշակային խնայողություններ, որոնք համարվում են պետական սեփականություն եւ կարող են օգտագործվել միայն կենսաթոշակային համակարգի դեֆիցիտը ծածկելու համար: Դեֆիցիտի բացակայության դեպքում դրանք կուտակվում են եւ հանձնվում կառավարման: Պահուստային ֆոնդերի ակտիվները կառավարում են պետության ստեղծած՝ AP1, AP2, AP3, AP4 եւ AP6 կառավարիչները: Այլ կառավարիչներ իրավունք չունեն կառավարել պահուստային միջոցները: Կուտակված կենսաթոշակային միջոցները վերը նշված ակտիվների կառավարիչների միջեւ բաժանվում են հավասարաչափ: Այդ միջոցները կառավարիչներին փոխանցվում են տարեկան մեկ անգամ՝ դեկտեմբեր ամսին: Ֆինանսների նախարարությունը մշակել է այդ ակտիվների ներդրման ռազմավարություն, որով դեկավարվում են կառավարիչները: Մասնավորապես՝ ակտիվների 50%-ը պարտադիր պետք է ներդրվի պետական պարտատոմսերում:

Պայմանակուտակային համակարգում վարվում է կատարված սոցիալական վճարների անձնավորված հաշվառում, եւ յուրաքանչյուր վճարում կատարողի համար վարվում է անհատական հաշիվ: Վերջինը պայմանականորեն կոչ-

վում է «կեղծ», քանի որ այդ հաշիվներն իրականում դատարկ են եւ դրանցում պայմանական մուտքագրված միջոցներն արդեն իսկ ծախսվել են ներկա կենսաթոշակառուներին կենսաթոշակ վճարելու համար: Սակայն ապագայում կենսաթոշակի չափը որոշելիս հիմք են ընդունվում այդ «կեղծ» անհատական հաշվում ներառված տեղեկությունները, եւ կենսաթոշակի չափը կախված է լինելու կատարված սոցիալական վճարների ընդհանուր գումարի չափից: Ահա այս պատճառով է, որ անհատական կենսաթոշակային հաշիվները կոչվում են պայմանական կուտակային հաշիվներ, իսկ համակարգը՝ պայմանակուտակային:

Անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս ամբողջությամբ հաշվի է առնվում նրա անձնական հաշվին կուտակված միջոցների հաշվեկշիռը: Կենսաթոշակի չափը որոշելիս անձի պայմանակուտակային հաշվում արտացոլված ընդհանուր գումարը բաժանվում է կյանքի սպասվելիք տեւողության ցուցիչով, այսինքն՝ կենսաթոշակի անցնելուց հետո սպասվելիք տարիների վրա: Վերջինը ցույց է տալիս տվյալ «կոհորտային» կամ սերնդին պատկանող անձանց կյանքի միջին տեւողությունը կենսաթոշակի անցնելուց հետո: Ներկայում Շվեդիայում կյանքի սպասվելիք միջին տեւողությունը 82 տարի է եւ կանանց ու տղամարդկանց համար հաշվվում է հավասար: Եթե անձը կենսաթոշակի անցնելու համար դիմում է 65 տարեկանում, ապա նրա պայմանական հաշվում արտացոլված ընդհանուր գումարը բաժանվում է 17X12 թվի վրա, եւ որոշվում է յուրաքանչյուր ամիս վճարվելիք կենսաթոշակի չափը: Որքան ուշ է դիմում անձը կենսաթոշակի անցնելու համար, այնքան մեծ է լինում ամսական կենսաթոշակի չափը, քանի որ անհատական հաշվում արտացոլված ընդհանուր գումարը բաժանվում է ավելի քիչ տարիների վրա: Երբ կյանքի միջին տեւողությունն ավելանում է, կյանքի սպասվելիք տեւողության ցուցիչը նույնպես ավելանում է: Դա նշանակում է, որ ինչքան երկար ապրեն մարդիկ, այնքան ցածր կլինի նրանց կենսաթոշակի չափը, քանի որ կենսաթոշակի հաշվարկված գումարը պետք է վճարվի ավելի երկար տարիների համար: Մյուս կողմից՝ կյանքի միջին տեւողության ավելացումը ենթադրում է, որ մարդը կարող է ավելի երկար աշխատել եւ այդ կերպ ավելացնել իր կենսաթոշակի չափը: Անձի 82 տարուց երկար ապրելու դեպքում, միեւնույն է, կենսաթոշակը շարունակվում է վճարվել նույն չափով:



Պայմանակուտակային հաշիվները յուրաքանչյուր տարի ինդեքսավորվում են կառավարության կողմից՝ հիմք ընդունելով երկրում աշխատավարձի միջին աճը: Պայմանակուտակային հաշիվի միջոցները չեն ժառանգվում: Անձի՝ մինչև կենսաթոշակի անցնելը մահվան դեպքում այդ միջոցները վերաբաժանվում են նույն «կոհորտայի» կամ սերնդի ողջ մնացած ներկայացուցիչների միջև: Սերնդակցի մահվան հետևանքով ստացված գումարները կոչվում են «ողջ մնացածի պարգեավճար»: Օրինակ՝ եթե մահանում է 55 տարեկան անձը, նրա պայմանական հաշվում մուտքագրված միջոցները վերաբաժանվում են 50-65 տարեկան ողջ մնացած անձանց միջև: Անձի անհատական պայմանական հաշվում յուրաքանչյուր տարի երեւում է տվյալ տարում ստացած «ողջ մնացածի պարգեավճարի» չափը:


Շվեդիայում կենսաթոշակային տարիքը սահմանված է 61-67 տարեկանը: Անձը կենսաթոշակ ստանալու համար դիմելու իրավունք ունի 61 տարեկան դառնալուց հետո, սակայն, որպես կանոն, մարդիկ դիմում են 65 տարին լրանալուց հետո:

**Պարտադիր լրիվ կուտակային** կենսաթոշակային բաղադրիչը ներդրել է 2000 թվականից: Այն համարվում է պետական կենսաթոշակային համակարգի բաղկացուցիչը: 18.5% պարտադիր վճարների գումարից 2.5%-ը նախատեսված է լրիվ կուտակային կենսաթոշակների համար եւ կուտակվում է մասնակիցների անհատական հաշիվներում: Ներկայում լրիվ կուտակային համակարգի մասնակիցների թիվը մոտ 5.5 միլիոն է: Կուտակային միջոցները ներդրվում են մասնակիցների ընտրած հիմնադրամներում: Անհատական հաշիվները վարում է հատուկ ստեղծված կառույցը՝ PPM-ը<sup>1</sup>: Ստեղծված լինելով պետության կողմից՝ այն չի ֆինանսավորվում պետական բյուջեից: PPM-ի գործունեությունը ֆինանսավորվում է կենսաթոշակային խնայողություն կատարողների հաշիվներից գանձվող վճարների հաշվին: Այդ վարձավճարը հավասար է տոկոսային առումով, սակայն ոչ գումարային, եւ կախված է յուրաքանչյուր մասնակցի հաշվեկշռում առկա ակտիվների չափից: Միջինացված վարձավճարը մեկ մասնակցի հաշվով հավասար է 60 շվեդական կրոնի:

Ներկայում Շվեդիայում գործում են շուրջ 800 կենսաթոշակային հիմնադրամներ, որոնք ունեն ներդրումային տարբեր ռազմավարություններ եւ տարբեր ռիսկայնության ներդրումային պորտֆելներ: Բոլորն էլ գրանցված են PPM-ում: Վերջինս ստանում է բոլոր մասնակիցների գնման ու վաճառքի կարգադրագրերը եւ դրանք փոխանցում ակտիվների կառավարիչներին: Կառավարիչները չեն տեսնում ներդրողներին եւ տեղյակ չեն, թե ում կենսաթոշակային ակտիվներն են կառավարում: PPM-ը վարում է հիմնադրամներին վերաբերող բոլոր գործարքները, վարչարարությունը եւ տեղեկատվությունը: Կուտակային կենսաթոշակային համակարգը PPM-ը դարձրել է ֆինանսական շուկայում գլխավոր ներդրում կատարող:

Կենսաթոշակային համակարգի մասնակիցները կարող են ընտրել ոչ ավելի, քան հինգ հիմնադրամ եւ դրանց միանալ ցանկացած ժամանակ: Յուրաքանչյուր տարի սոցիալական նոր վճարները ներդրվում են՝ համաձայն մասնակիցների վերջին ընտրության: Ներդրումների հնարավորությունները եւ տարբերակները բազմազան են: PPM-ի անձնակազմն աջակցում է խորհրդատվություն է տրամադրում անձանց՝ ընդունելու ճիշտ ու երկարաժամկետ ներդրման որոշումներ: Սակայն հարկ է նշել, որ մասնակիցների 2/3-ը չի օգտվում ակտիվների կառավարչի ընտրություն կատարելու իր իրավունքից, եւ օրենքի համաձայն՝ նրանց ակտիվները կառավարման համար փոխանցվում են AP7 կենսաթոշակային հիմնադրամին: Վերջինի մոտ միջին եկամտաբերությունը ավելի բարձր է՝ 7-8%, քան այլ ակտիվների կառավարիչների մոտ, իսկ ռիսկայնությունը՝ ցածր: Երկրում տարեկան գնաճը կազմում է 2%: AP7-ը հաշվետվություն է ներկայացնում միայն PPM-ին, որից ստանում է ընտրություն չկատարած անձանց կենսաթոշակային միջոցները:

Կուտակային կենսաթոշակի չափը, ի թիվս այլ հանգամանքների (կենսաթոշակի անցնելու տարիք, սոցիալական վճարումների ընդհանուր գումար), կախված է նաեւ ընտրված կենսաթոշակային հիմնադրամի եկամտաբերության աստիճանից: Կուտակված կենսաթոշակային ակտիվների միանվագ դուրսբերման այլընտրանքային հնարավորություն նախատեսված չէ: Կենսաթոշակի տարիքի հաս-



ներով՝ մասնակիցը կարող է ընտրել կուտակային կենսաթոշակի ստացման հետեւյալ երկու տարբերակները.

✓ փոփոխական դրույքաչափով անուիտետ,

✓ հաստատագրված դրույքաչափով անուիտետ:

Եթե կենսաթոշակառու ընտրում է փոփոխական դրույքաչափով անուիտետի տարբերակը, ապա կուտակված կենսաթոշակային ակտիվները մնում են ընտրված կենսաթոշակային հիմնադրամում: Այդ դեպքում կենսաթոշակի չափը կախված կլինի հիմնադրամի եկամտաբերությունից և կարող է փոփոխվել: Եթե կենսաթոշակառու ընտրում է հաստատագրված դրույքաչափով անուիտետը, ապա կուտակված ակտիվները դուրս են բերվում հիմնադրամից և փոխանցվում PPM-ին՝ հետագա կառավարման համար: Փոխանցելուց հետո ակտիվների կառավարման ռիսկը դրվում է PPM-ի վրա, որը յուրաքանչյուր ամիս պարտավոր է վճարել հաստատագրված չափով կուտակային կենսաթոշակ: Եթե կառավարման ընթացքում եկամտաբերությունը բարձր է լինում կենսաթոշակի սահմանված դրույքաչափից, դրանք նույնպես վճարվում են կենսաթոշակառուին՝ լրացուցիչ/հավելյալ վճարումների տեսքով:

### Շվեդիայի կենսաթոշակային համակարգի մասնավոր բաղադրիչը

Պետական կենսաթոշակային բաղադրիչից գատ, Շվեդիայի կենսաթոշակային համակարգի բաղկացուցիչ է մասնավոր բաղադրիչը, որը ներառում է մասնագիտական և կամավոր ապահովագրական կենսաթոշակները:

Շվեդիայում աշխատողների շուրջ 90%-ը, բացի պետական կենսաթոշակներից, ստանում են նաեւ մասնագիտական կենսաթոշակներ, որոնց հիմք են մասնագիտական կենսաթոշակային սխեմաները: Մասնագիտական կենսաթոշակների համակարգի ակտիվ սուբյեկտներն են գործատուները, աշխատողների միությունները, ապահովագրական ընկերությունները և աշխատողների միությունների ստեղծած clearing center-ները (այսուհետ՝ Կենտրոններ), որոնք առևտրային կազմակերպություն են:

Գործատուներն ու աշխատողների միությունները<sup>2</sup> բանակցում են և համաձայնության են գալիս տվյալ տիպի աշխատողների մասնագիտական կենսաթոշակային սխեմաների վերաբերյալ: Կենտրոնները գործատուների և աշխատողների միության համաձայնության հիման վրա մշակում են ամփոփ փաստաթուղթ և ուղարկում իրենց կողմից գնահատված և վարկանիշային ցուցակով<sup>3</sup> ընդգրկված ապահովագրական կազմակերպություններին՝ առաջարկելով ներկայացնել մասնագիտական կենսաթոշակային սխեմաների առաջարկներ՝ ձեռք բերված համաձայնության շրջանակներում: Ապահովագրական ընկերությունները ներկայացնում են իրենց առաջարկները, մասնավորապես՝ իրենց պորտֆելները, և թե ինչ ապահովագրական մասնագիտական կենսաթոշակային սխեմա կարող են տրամադրել: Կենտրոնները նաեւ բանակցում են ապահովագրական ընկերությունների հետ՝ վարչական ծախսերի և միջնորդավճարների վերաբերյալ: Ապահովագրական ընկերություններին կենտրոնների տված գնահատականի հիման վրա, որը մեծ նշանակություն ունի աշխատողների համար, վերջիններս կատարում են իրենց ընտրությունը: Գործատուն, աշխատողի ընտրության համաձայն, յուրաքանչյուր ամիս վճարում է կատարում հոգուտ աշխատողի մասնագիտական կենսաթոշակային սխեմայի: Ամսական մասնագիտական կենսաթոշակային վճարները գործատուները ապահովագրական ընկերություններին են փոխանցում Կենտրոնների միջոցով: Վերջինները վարում են նաեւ անձնավորված հաշվառում՝ մասնագիտական կենսաթոշակների մասով: Կենտրոններն իրենց մատուցած ծառայությունների դիմաց միջնորդավճար են գանձում մասնագիտական կենսաթոշակի համար կատարվող վճարումներից: Փաստորեն՝ Կենտրոնները մատուցում են միջնորդական ծառայություններ և միաժամանակ ներկայացնում աշխատողների շահերը: Մասնագիտական կենսաթոշակ ստանալու տարիքը 65 է:

Բացի մասնագիտական կենսաթոշակներից, շատերը, կամավոր, ապահովագրական ընկերությունների հետ պայմանագրի հիման վրա ձեռք են բերում նաեւ կամավոր կենսաթոշակներ և լրացուցիչ կենսաթոշակ են ստանում նաեւ մասնավոր կենսաթոշակային սխեմաների համաձայն:

### Կենսաթոշակային համակարգի մասնակիցների մեղեկացվությունը սրամադրելը

Յուրաքանչյուր տարի կենսաթոշակային համակարգի մասնակիցները «նարնջագույն ծրարով» գրավոր նամակ են ստանում Սոցիալական ապահովագրության պետական գործակալությունից և PPM-ից: «Նարնջագույն ծրարը» տեղեկատվություն է պարունակում նախորդ տարվա ընթացքում ստացած կամ ձեռք բերած կենսաթոշակային եկամուտների, կենսաթոշակային հաշվի հաշվեկշռի մասին, ինչպես նաեւ կանխատեսումներ՝ ապագա կենսաթոշակային եկամուտների վերաբերյալ: ■

1. Սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել, որ բաղադրիչների միայն 6%-ն է հասկանում PPM-ի իմաստը և առաքելությունը, 52%-ն ընդհանրապես չի հասկանում, իսկ ձգտում է հասկանալ միայն 30%-ը: Ի դեպ՝ 2010թ. հունվարից PPM-ը միաձուլվելու է Շվեդիայի սոցիալական ապահովագրության գործակալության կենսաթոշակային վարչության հետ, ինչի արդյունքում՝ ստեղծվելու է Կենսաթոշակային ապահովագրության գործակալություն: Վերջինը պատասխանատու է լինելու կենսաթոշակային համակարգի պետական բաղադրիչի բոլոր երեք (երաշխավորված, պայմանակուտակային, լրիվ կուտակային) ծրագրերի կառավարման համար:
2. Ի դեպ՝ Շվեդիայում արդյունավետ գործում են երկու տիպի աշխատողների խոշոր միություններ՝ սպիտակ և կապույտ օձիքավորների միություններ: Աշխատողներն անդամավճար են վճարում աշխատողների միություններին անդամակցության համար: Անդամավճարի չափը տարբեր է՝ կախված այն բանից՝ տվյալ աշխատավորական միությունը գործազրկության դեպքում նպաստ վճարում է, թե ոչ:
3. Կենտրոնները գնահատում են ապահովագրական ընկերությունների կարողությունները և ըստ այդմ՝ կազմում ապահովագրական ընկերությունների վարկանիշային ցուցակ: